Փրկչի Քավությունը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՆՅՈՒԹ

Սուրբ գրությունների հետևյալ հատվածները և հայտարարությունը ուսուցանում են Հիսուս Քրիստոսի Քավության մասին: 10-15 րոպե ուշադիր կարդացեք այդ աղբյուրները (նաև Փրկչի Քավության մասին պատմող ձեզ հետաքրքրող կամ այս դասից առաջ գտած այլ աղբյուրներ): Կարդալիս մտածեք, թե այս աղբյուրներից յուրաքանչյուրն ինչպես է օգնում ձեզ ավելի լավ հասկանալ, թե Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ինչ են արել ձեզ համար և ինչու:

- Ղուկաս 22.39–44
- Ղուկաս 23:33–38, 44–46
- Հովհաննես 3:14–17
- Ալմա 7.11-13
- 3 Նեփի 27.14
- Վարդապետություն և Ուխտեր 18.10-11
- Վարդապետություն և Ուխտեր 19.16–19

Յոթանասունից երեց Թեդ Ռ. Քալիսթերն ուսուցանել է.

Ուրեմն ի՞նչ է Հիսուս Քրիստոսի Քավությունը: Ինչ-որ առումով դա աստվածային իրադարձությունների մի շարք է, որը սկիզբ առավ Գեթսեմանիում, շարունակվեց խաչի վրա և գագաթնակետին հասավ գերեզմանից Փրկիչի հարությամբ: Այն թելադրվեց մեզանից յուրաքանչյուրի հանդեպ աներևակայելի սիրուց: Այն պահանջեց մի էակ, որն անմեղ էր, անհուն զորություն ուներ տարրերի վրա, նույնիսկ՝ մահվան վրա, որն անսահման կարողություն ուներ տանելու մեր բոլոր մեղքերի և տկարությունների հետևանքները, և որը, փաստորեն, իջավ այդ բոլորից ներքև [տես Վարդապետություն և Ուխտեր 88.6]: Այս էր Հիսուս Քրիստոսի առաքելությունը՝ սա էր Նրա Քավությունը:

Ապա ո՞րն էր դրա նպատակը: Այն մեզ հնարավորություն տվեց վերադառնալ Աստծո ներկայություն, ավելի շատ նմանվել Նրան և ունենալ լիարժեք ուրախություն:

Դա արվեց՝ հաղթահարելով չորս խոչընդոտ.

1. Ֆիզիկական մահը
2. Ադամի և մեր մեղքերից առաջացած հոգևոր մահը
3. Մեր չարչարանքներն ու տկարությունները
4. Մեր թուլություններն ու թերությունները

(Թեդ Ռ. Քալիսթեր «Հիսուս Քրիստոսի Քավությունը», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2019, 85)

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *The Savior's Atonement*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.